



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 21 » *փետրվարի* 2018 թվականի N 38 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետով և 15-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի 2018 թվականի փետրվարի 15-ի N05-Ա որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2017 թվականի հաշվետվությունը, համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՂԵԿԱՎԱՐ

Ե. ՏԵՐՏԵՐՅԱՆ

ք. Երևան

« 21 » *փետրվարի* 2018 թ.

Հավելված

ՀՀ բնապահպանության նախարարության
բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի
2018 թվականի _____ -ի N _____-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(Հաշվետու ժամանակահատված՝ 21.08.2017թ. - 31.12.2017թ.)

Բովանդակություն

1. Ներածություն
2. Գործունեության կատարողականի գնահատման արդյունքները.
3. Վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծությունը.
4. Խորհրդատվական գործունեությունը, տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ տրվող հարցերի վերհանումը և այն իրավական ակտերը, որոնք տալիս են դրանց հստակ պատասխանները.
5. Կանխարգելիչ գործողությունները և այն ռիսկերը, որոնց վերհանմանն են ուղղված և որոնք կանխել են դրանք.
6. Ստուգումներ, դրանց քանակը, բնութագրերը, տևողությունը և անցկացված ստուգումների արդյունքները.
7. Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, որոնք վերհանել են տեսչական մարմինները, ինչպես նաև դրանց պատճառները և տարածվածությունը. Տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները.
8. Օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները՝ օրենսդրական բացերը լրացնելու, ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով.

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախախարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 445-Ն որոշմամբ, գործունեությունը ծավալել է 2017 թվականի օգոստոսի 21-ից, ուստի տվյալները ներկայացված են գործունեության սկզբից մինչև դեկտեմբերի 31-ը:

Տեսչական մարմնի հաշվետու ժամանակաշրջանի գործունեության համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Տեսչական մարմնի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

Տեսչական մարմնի ստեղծման պահից հաստատված ստուգումների տարեկան ծրագրի բացակայության պատճառով ստուգումներ իրականացվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրավապահ մարմինների որոշումներով:

2. Գործունեության կատարողականի գնահատման արդյունքները.

Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդոլոգիան մշակման փուլում է:

3. Վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծությունը.

Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտներին բացահայտելու նպատակով իրականացվում է տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների վերլուծություն: Մասնավորապես՝

- Տեսչական մարմնում առկա տեղեկատվությունը համադրվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության հետ,

- Տեսչական մարմնում առկա՝ յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը համադրվել է բնապահպանական և բնօգտագործման ոլորտներում գործունեություն իրականացնելու թույլտվություն տրամադրող գործակալությունների ներկայացրած տվյալների հետ:

Ինչի արդյունքում պարզվել է, որ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողները աճել են՝ շուրջ 270 տնտեսվարող սուբյեկտ:

Վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծության համար հիմք են հանդիսացել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացված 20 ստուգումները (2-ը՝ չի ավարտվել) և 488 վարչական վարույթները:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացված վարչարարության արդյունքում արձանագրված իրավախախտումների և բնությանը պատճառված վնասների վերաբերյալ ունենք հետևյալ պատկերը՝

h/h	Ոլորտը	Վարչական տուգանքի որոշում, հատ	Վարչական տուգանք, հազ. դրամ	Վնաս, հազ. դրամ
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանության	187	16 210 000	2 197 145 830
2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանության	29	2 460 000	2 260 000
3	Մթնոլորտային օդի պահպանության	36	1 950 000	935 920
4	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	1	200 000	
5	Վտանգավոր նյութեր արտադրության ու սպառման թափոններ	5	350 000	60 000
6	Հողերի օգտագործում և պահպանության	19	1 140 000	578 000
7	Ընդերքօգտագործում և պահպանություն	7	730 000	
ԸՆԴԱՄԵՆԸ		284	23 040 000	2 200 979 750

Իրականացված ստուգումների և վարույթների արդյունքում բնությանը պատճառված վնասի մեծության չափով ունենք ըստ ոլորտների հետևյալ պատկերը՝

Բուսական աշխարհի օգտագործման և պահպանության՝ 99.83%

Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանության՝ 0.10%

Մթնոլորտային օդի պահպանության՝ 0.04%

Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանության՝ 0%

Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ՝ 0.003%

Հողերի օգտագործում և պահպանություն՝ 0.03%

Ընդերքի օգտագործում և պահպանություն՝ 0% - (չկա վնասի հաշվարկ)

Իրականացված ստուգումների և քննված վարույթների արդյունքում նշանակված վարչական տուգանքների մեծության չափով ըստ ոլորտների ունենք հետևյալ պատկերը՝

Բուսական աշխարհի օգտագործման և պահպանության՝ 70.36%

Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանության՝ 10.68%

Մթնոլորտային օդի պահպանության՝ 8.46%

Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանության՝ 0.87%

Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ՝ 1.52%

Հողերի օգտագործում և պահպանության՝ 4.95%

Ընդերքի օգտագործում և պահպանության՝ 3.17%

Բուսական աշխարհի պահպանության ոլորտում հայտնաբերվել է 22 038 հատ տարբեր տեսակի հատված ծառ և 331 խմ ապօրինի տեղափոխվող փայտանյութ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում կատարվել են շինարարական աշխատանքներ՝ առանց էկոփորձաքննության:

Կենդանական աշխարհի պահպանության ոլորտում Հայտնաբերվել է 12 կաքավի, 1 նապաստակի, 2 աղավնու և 1 լորի ապօրինի որսի դեպքեր: Առգրավվել է 1062 կգ սիգ, 92,6 կգ տարբեր տեսակի ձկներ, 50 հատ ձկնագողության պարագաներ և 3 հատ հրացան:

Մթնոլորտային օդի պահպանության ոլորտում կատարվել է առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի և շինարարական աղբի տեղափոխում:

Ջրային ռեսուրսների պահպանության ոլորտում չի կատարվել ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պարտավորությունները՝ ջրառի կետում բացակայում է ջրաչափը:

Հողերի պահպանության ոլորտում խախտվել է հողի բերրի շերտի օգտագործման կարգը:

Ընդերքի արդյունահանման ոլորտում կատարվել է տարբեր տեսակի օգտակար հանածոների (ավազ, պեռլիտային ավազ, բազալտ, կավախառն կոպիճի լեռնային զանգված) ապօրինի ընդերքօգտագործման աշխատանքներ, առանց թույլտվության խորքային հորի հորատման աշխատանք (երկրաբանական ուսումնասիրություն):

Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները սահմանված ժամկետում չեն երկայացնելու կամ ոչ ճիշտ ներկայացնելու համար վարչական տուգանքի են ենթարկվել 41 կազմակերպություն՝ 2 430 000 ՀՀ դրամի չափով:

4. Խորհրդատվական գործունեությունը, տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ տրվող հարցերի վերահանումը և այն իրավական ակտերը, որոնք տալիս են դրանց հստակ պատասխանները.

Տեսչական մարմնի ղեկավարի նախաձեռնությամբ հանդիպումներ են տեղի ունեցել հանքարդյունահանման ոլորտում գործող մի շարք տնտեսվորող սուբյեկտների հետ, որի արդյունքում նրանց կողմից բարձրացված մի շարք հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ, ինչպես նաև խորհրդատվության արդյունքում առաջացած հարցերի լուծման վերաբերյալ տեսչական մարմնի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրվել են ժամկետներ՝ թերությունները վերացնելու համար:

Հանրության կողմից ՁԼՄ-ներում բարձրացված հարցերին և առաջ քաշված խնդիրներին Տեսչական մարմինը օպերատիվ կերպով արձագանքել է և տրվել են համապատասխան լուծումներ:

Տնտեսվարող սուբյեկտների կողմից, ՀՀ օրենսդրության կիրառման վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում հարցումներ չեն կատարվել:

5. Կանխարգելիչ գործողությունները և այն ռիսկերը, որոնց վերհանմանն են ուղղված, և որոնք կանխել են դրանք.

Կանխարգելման աշխատանքների շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ մարզպետների և Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ, որտեղ քննարկվել են Տեսչական մարմնի հետ համագործակցության վերաբերյալ հարցեր՝ կապված շրջակա միջավայրին պատճառվելիք հնարավոր վնասների կանխման համար:

Սևանա լճում ձկան բնական վերարտադրության ժամանակահատվածում, Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարականով, իրականացվել է հսկողություն Սևանա լճի առափնյա տարածքներում և Սևանա լիճ թափվող գետերի վրա: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում առգրավվել են նավակներ և ձկնորսական ցանցեր և հանձնվել է «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:

Տեսչական մարմնի ստորաբաժանումների կողմից կազմակերպվել և իրականացվել են ամենօրյա ստուգայց-շրջայցեր՝ ապօրինի ծառահատումների կանխարգելման նպատակով:

6. Ստուգումներ, դրանց քանակը, բնութագրերը, տևողությունը և անցկացված ստուգումների արդյունքները.

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է 20 ստուգում՝

- բուսական աշխարհի պահպանության ոլորտում գործող 10 տնտեսվարող սուբյեկտներում, որի արդյունքում հայտնաբերված խախտումների հիման վրա հաշվարկվել է շուրջ 2 031 000 000 ՀՀ դրամ շրջակա միջավայրին պատճառված վնաս: Ստուգման արդյունքները ուղարկվել են համապատասխան իրավապահ մարմիններին՝ հետագա ընթացքը ապահովելու նպատակով:

- մթնոլորտային օդի պահպանության ոլորտում գործող 6 տնտեսվարող սուբյեկտներում, որի արդյունքում հայտնաբերված խախտումների հիման վրա իրականացվել է վարչական վարույթ, նշանակվել է 500 000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, ինչպես նաև հաշվարկվել է 4 100 000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին պատճառված վնաս: Բացահայտված թերությունների և խախտումների վերացման նպատակով տրվել է թվով 4 հանձնարարական:

- ընդերքի արդյունահանման ոլորտում գործող 4 տնտեսվարող սուբյեկտներում, որից 2-ին տրվել են հանձնարարական-ծանուցումներ՝ խախտումները վերացնելու նպատակով, իսկ 2-ի ստուգումները դեռևս ընթացքի մեջ են: Բացահայտված թերությունների և խախտումների վերացման նպատակով տրվել է թվով 2 հանձնարարական:

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրականացված մեկ ստուգման միջին տևողությունը կազմել է 14 օր:

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում անցկացված ստուգումների արդյունքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղադրվել է ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայք-էջում:

7. Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, որոնք վերհանել են տեսչական մարմինները, ինչպես նաև դրանց պատճառները և տարածվածությունը.

Տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ կրկնվող խախտումներն են՝

- ՀՀ անտառային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված նորմերը՝ անտառային հողերում ծառերն ու թփերը հատելը և արմատախիլ անելը:

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված նորմերը՝ չի կատարում օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմանները,

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ, 31-րդ և 41-րդ հոդվածներով սահմանված նորմերը՝ աշխատանքներ կազմակերպվել են առանց սահմանային թույլատրելի արտանետումների չափաքանակների թույլտվության, առանց արտադրական և սպառման այլ թափոնների արտանետումների չափաքանակների նորմատիվների, ձեռնարկության տարածքում իրականացրել են արտադրական և սպառման այլ թափոնների ոչնչացում կամ արտադրական թափոնների պահեստավորվում:

- «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «ՀՀ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.01.2003թ. N 121-Ն որոշմամբ, «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նորմերը՝ եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները ներկայացվել են աղավաղված կամ ոչ ճիշտ: Չեն ներկայացրել գործունեության վերաբերյալ կիսամյակային հաշվետվություններ:

Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կրկնվող օրենսդրության խախտումների տարածվածությունը ներկայացված է հավելված 1-ով:

8. Օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները՝ օրենսդրական բացերը լրացնելու, ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով.

Ներկայացված է հավելված 2-ով:

Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կրկնվող օրենսդրության խախտումների տարածվածությունը

<i>N</i>	<i>Ոլորտը</i>	<i>Երևան</i>	<i>Արագածոտն</i>	<i>Արարատ</i>	<i>Արմավիր</i>	<i>Կոտայք</i>	<i>Փեղևաքունիք</i>	<i>Տավուշ</i>	<i>Լոռի</i>	<i>Շիրակ</i>	<i>Վայոց ձոր</i>	<i>Սյունիք</i>	<i>Կառուցվածքային ստորաբաժանումներ</i>	<i>Ընդամենը</i>
1	Բուսական աշխարհի պահպանության	6	0	13	6	18	32	180	81	2	4	5	11	358
2	Կենդանական աշխարհի պահպանության	3	4	2	3	3	3	0	1	5	7	3	5	39
3	Մթնոլորտային օդի պահպանության	8	7	0	5	5	2	0	2	6	0	0	3	38
4	Ջրային ռեսուրսների պահպանության	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	1
5	Թափոնների առաջացման և տեղափոխման	0	1	1	2	0	0	0	0	0	0	0	1	5
6	Հողերի պահպանության	0	2	1	3	7	2	0	0	3	0	0	0	18
7	Ընդերքի արդյունահանման	1	0	0	0	0	5	0	1	0	0	0	1	8
ԸՆԴԱՄԵՆԸ		18	14	17	19	33	44	180	85	16	11	8	22	467

ՀՀ	Միջոցառում (առաջարկություն)	Ընդունման անհրաժեշտությունը	Կարգավորման առարկան
1.	<p>ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» N 92-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ</p>	<p>1) Սահմանված չեն հետևյալ սակագները՝ Ս_Տ և Ս_Թ (10-րդ կետ), Ծ_Փ (13-րդ կետ), Ծ_Պ (13-րդ և 15-րդ կետեր), Ծ_{ՕԳ} (13-րդ և 16-րդ կետեր), Ծ_Շ, Ծ_Բ, Ծ_Տ և Ծ_{ՓՌ} (14-րդ կետ), Ս_{ԲՎ} (15-րդ կետ), Ս_{ՕԳ} և Ծ_Կ (16-րդ կետ) և Ս_Վ (19-րդ կետ), որի պարագայում սահմանված բանաձևերը գործնականում կիրառելի չեն.</p> <p>2) 20-րդ կետով սահմանված բանաձևում առկա են Գ_Բ և Գ_Թ հապավումները, որոնց բացատրությունները չկան, բայց առկա են Գ_Վ և Գ_Դ հապավումների բացատրություններ, որոնք չկան բանաձևում, ուստի կարիք կա կատարելու նշված վրիպակների ուղղում.</p> <p>3) 11-րդ, 17-րդ, 20-րդ կետերում կիրառվող խախտման (վնասման) պահը որոշելը իրատասեկան չէ, ուստի որպես ելակետային տվյալ պետք է ընդունել խախտման հայտնաբերման պահը.</p> <p>4) որոշման մեջ սահմանված չեն վնասված հողամասը նախնական տեսքի բերելու ժամկետներ՝ ըստ վնասված հողամասի մակերեսի, ուստի դրա հետ կապված բանաձևերը գործնականում կիրառելի չեն:</p>	<p>1) Սահմանել հետևյալ սակագները՝ Ս_Տ և Ս_Թ (10-րդ կետ), Ծ_Փ (13-րդ կետ), Ծ_Պ (13-րդ և 15-րդ կետեր), Ծ_{ՕԳ} (13-րդ և 16-րդ կետեր), Ծ_Շ, Ծ_Բ, Ծ_Տ և Ծ_{ՓՌ} (14-րդ կետ), Ս_{ԲՎ} (15-րդ կետ), Ս_{ՕԳ} և Ծ_Կ (16-րդ կետ) և Ս_Վ (19-րդ կետ).</p> <p>2) 20-րդ կետով սահմանված բանաձևում կատարել առկա հապավումների վրիպակների ուղղում.</p> <p>3) 11-րդ, 17-րդ, 20-րդ կետեր՝ «խախտման (վնասման)» բառերից հետո լրացնել «հայտնաբերման» բառով.</p> <p>4) Լրացնել 27-րդ կետով, որով կսահմանվեն վնասված հողամասը նախնական տեսքի բերելու ժամկետներ՝ ըստ վնասված հողամասի մակերեսի:</p>

2.	<p>«ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքի հետ փոխկապակցված նորմատիվ իրավական ակտի նախագիծ»</p>	<p>Համաձայն «ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը չի կարող երկարաձգվել, եթե ընդերքօգտագործման իրավունքի երկարաձգումը պայմանավորված է ընդերքօգտագործողի կողմից պայմանագրային պարտականությունների կատարման խախտմամբ», իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 445-Ն որոշման N 1 հավելվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետի «ը» պարբերության՝ ընդերքօգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը:</p>	<p>Նորմատիվ իրավական ակտով պետք է կարգավորվեն ընդերքօգտագործման իրավունք տրամադրող լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի միջև փոխհամագործակցությունը, մասնավորապես՝ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելու նպատակով, մինչև ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը ընդերքօգտագործողների պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկություն ստանալու համար լիազոր մարմինը պետք է դիմի Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին, ապա նոր անրադառնա իրավունքի տրամադրմանը:</p>
3.	<p>«ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի N 97-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ»</p>	<p>«ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի N 97-Ն որոշմամբ կանոնակարգվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով հաշվիչ (չափիչ) սարքերի տեղադրման ու կնքման կարգը, ինչպես նաև բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների արդյունահանած ստորերկրյա հանքային ջրի և արտադրված ածխաթթու գազի ծավալների՝ հաշվիչ (չափիչ) սարքերի տվյալները</p>	<p>«ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի N 97-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշում»:</p>

		<p>հարկային և համապատասխան լիազոր մարմինների կողմից արձանագրվելու կարգն ու ժամկետները: Միևնույն ժամանակ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1267-Ն որոշմամբ կանոնակարգվում են նույն իրավահարաբերությունները, ուստի անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի N 97-Ն որոշումը:</p>	
4.	<p>ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ</p>	<p>1) Նկտաի ունենալով, որ ընդերքօգտագործողներին զգուշացում տալը ուղղակիորեն ածանցվում է նրանց կողմից թույլ տրված իրավախախտումից և ըստ էության նպատականդված է խախտման հետևանքները վերացնելուն, ուստի հաշվի առնելով որ իրավախախտումները առավել բացահայտվում են վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է ընդերքօգտագործման ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի համար հնարավորություն ստեղծել որպես սանկցիա կիրառելու զգուշացումը, որն ինքնին իրավունքի դադարեցում չի առաջացնում:</p> <p>2) ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով ներկայումս չեն կարգավորվում ընդերքօգտագործման թույլտվության գործողության կասեցման հետ կապված իրավահարաբերությունները և կասեցման հիմքերը, այն ինչ ընդերքօգտագործման իրավահարաբերություններում հաճախ գործնականում թույլ են տրվում այնպիսի իրավախախտումներ, որոնց համար զուտ զգուշացում տալը բավարար և իրատեսական չէ քանի որ օրենքով սահմանված զգուշացման առավելագույն ժամկետում որոշակի</p>	<p>1) 30-րդ հոդվածի 2-րդ մաս՝ «Լիազոր մարմինը» բառերից հետո լրացնել «ընդերքօգտագործման ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերը.</p> <p>2) Լրացնել 30.1-ին և 30.2-րդ հոդվածներով. «Հոդված 30.1. Թույլտվության գործողության կասեցումը 1. Ընդերքօգտագործման թույլտվության գործողության կասեցումը որոշակի ժամկետով կամ որոշակի պայմաններով ընդերքօգտագործող անձի ընդերքօգտագործման գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ ընդերքօգտագործման թույլտվությամբ վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից</p>

		<p>խախտումներ վերացնել գործնականում տեխնիկապես անհնար է: Ուստի որպես զգուշացման այլընտրանքային միջոց անհրաժեշտ է սահմանել թույլտվության գործողության կասեցումը:</p>	<p>ժամանակավորապես զրկումն է:</p> <p>2. Ընդերքօգտագործման թույլտվության գործողության կասեցման ընթացքում ընդերքօգտագործողն իրավունք չունի իրականացնել կասեցման որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն, բացառությամբ նրանց, որոնք ուղղված են կասեցման պատճառները վերացնելուն, ինչպես նաև կասեցման մասին որոշմամբ նախատեսված անհետաձգելի միջոցառումներն իրականացնելուն:</p> <p>3. Ընդերքօգտագործման թույլտվության գործողության կասեցման ընթացքում ընդերքօգտագործողի կողմից սույն հոդվածի երկրորդ մասով արգելված գործունեության, գործառույթի կամ գործողության իրականացումը համարվում է առանց թույլտվության ընդերքօգտագործման իրականացում և առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:</p> <p>4. Ընդերքօգտագործման թույլտվության գործողությունը կասեցվում է ընդերքօգտագործման իրավունքը տրամադրած լիազոր մարմնի գրավոր որոշմամբ: Ընդերքօգտագործման թույլտվության գործողությունը կասեցնելու որոշմամբ պետք է հստակ սահմանվեն կասեցվող գործողությունը, գործառույթը կամ գործողությունները, ինչպես նաև կասեցման պատճառները, իրավական հիմքերը և ժամկետները:</p> <p>1) Եթե, խախտման բնույթից ելնելով, դրանք կամ դրանց հետևանքները հնարավոր է վերացնել ընդերքօգտագործողի առանձին իրավունքները կամ թույլտվությամբ վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկելու միջոցով, ապա այդ</p>
--	--	---	---

			<p>դեպքերում թույլտվության ողջ գործողության կասեցում չի կիրառվում.</p> <p>2) Եթե ընդերքօգտագործման թույլտվության գործողության կասեցման հետևանքով ուղղակի վնաս կհասցվի պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին ու բարի համբավին, ապա ընդերքօգտագործման թույլտվության գործողությունը կասեցնելու մասին որոշմամբ պետք է նախատեսվեն ընդերքօգտագործողի կողմից թույլտվությունը կասեցնելու հետևանքով երրորդ անձանց շահերի պաշտպանության երաշխիքները և դրա հետևանքով նրանց պատճառված վնասների հատուցման կարգը կամ հետևանքների վերացման ժամկետը:</p> <p>Սույն հոդվածով նախատեսված դրույթները չպարունակող թույլտվության գործողությունը կասեցնելու մասին որոշումներն անվավեր են:</p> <p>5. Եթե թույլտվության գործողությունը կասեցվել է սույն օրենքով նախատեսված մեկից ավելի հիմքերով, ապա կասեցման որոշումը պետք է պարունակի յուրաքանչյուր հիմքը:</p> <p>6. Թույլտվության գործողությունը կասեցված է համարվում այդ մասին լիազոր մարմնի որոշումը ընդերքօգտագործողին պատշաճ հանձնելու կամ նրա մոտ մուտքագրվելու օրվան հաջորդող օրվանից, եթե թույլտվության գործողությունը կասեցնելու մասին որոշմամբ կամ օրենքով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:</p> <p>7. Թույլտվության գործողության կասեցումը վերացված է համարվում կասեցման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից: Եթե թույլտվության գործողության</p>
--	--	--	--

			<p>կասեցման ժամկետը սահմանվել է մինչև խախտման պատճառի վերացումը, ապա թույլտվության գործողության կասեցումը վերացված է համարվում ընդերքօգտագործողի՝ խախտումները վերացնելու մասին հայտարարությունը (համապատասխան հիմնավորող փաստաթղթերով) լիազոր մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե այդ ժամկետում լիազոր մարմինն այլ որոշում չի կայացնում կամ այլ ավելի կարճ ժամկետ չի սահմանում և դրա մասին պատշաճ ձևով ընդերքօգտագործողին չի հայտնում:</p> <p>Ընդերքօգտագործման վճարների ապառքի պատճառով կիրառված թույլտվության գործողության կասեցումը վերացած է համարվում ընդերքօգտագործման վճարների, օրենքով սահմանված լինելու դեպքում նաև դրանց՝ վճարումը ուշացնելու համար օրենքով սահմանված տույժերի գումարների գծով պարտավորությունները կատարելու օրվան հաջորդող օրվանից:</p> <p>8. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված որոշումը լիազոր մարմինն ընդունում է իր նախաձեռնությամբ կամ ընդերքօգտագործման ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի միջնորդությամբ.</p> <p>9. Սույն հոդվածով սահմանված կասեցումը կիրառվելու դեպքում սույն օրենսգրքի 30-րդ հոդվածով սահմանված զգուշացումը չի տրվում, իսկ արդեն իսկ տրված զգուշացման ժամկետի ընթացքը կասեցվում է:</p> <p>Հոդված 30.2. Թույլտվության գործողության կասեցման հիմքերը</p>
--	--	--	--

			<p>1. Թույլտվության գործողության կասեցման հիմք է՝</p> <p>1) ընդերքօգտագործողի կողմից ընդերքօգտագործման իրավունքը օրենքի խախտմամբ այլ անձի օգտագործման տալու, գրավ դնելու կամ օտարելու դեպքերը.</p> <p>2) ընդերքօգտագործողի կողմից սույն օրենքագրքով նախատեսված դեպքերում փոփոխությունների մասին լիազոր մարմնին ժամանակին չհայտնելը.</p> <p>3) ընդերքօգտագործման իրականացման ժամանակ թույլտվության (պայմանագրի) պահանջների ու պայմանների կամ պայմանագրային պարտավորությունների այնպիսի խախտում թույլ տալը, որը անմիջական վտանգ կամ վնաս հասցնելու վտանգ է պարունակում մարդկանց կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին, ինչպես նաև պարունակում է բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկ.</p> <p>4) ընդերքօգտագործման իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության պահանջների կամ արդյունահանման նախագծի կամ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրի պայմանների խախտումը.</p> <p>5) ընդերքօգտագործողի կողմից իր գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձանց՝ օրենսդրությանը համապատասխան ստուգումների իրականացմանը խոչընդոտելը կամ պահանջվող նյութերը չներկայացնելը.</p> <p>6) դատարանի կողմից ընդերքօգտագործողին սնանկ ճանաչելը.</p> <p>7) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության դրական եզրակացության պահանջները խախտելը.</p> <p>8) ընդերքօգտագործողի դիմումը.</p> <p>9) սույն օրենսգրքի 30-րդ հոդվածով նախատեսված զգուշացում տալը, եթե կասեցումը անհրաժեշտ է</p>
--	--	--	--

			<p>զգուշացման հիմքերը վերացնելու համար. 10) սույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընդերքօգտագործման վճարների ապառքը. 11) օրենքով նախատեսված այլ դեպքերում:»:</p>
5.	<p>«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ</p>	<p>1) 3-րդ հոդվածով սահմանվող սակագները այլ տեսակի ձկների տեսակների համար սահմանված են յուրաքանչյուր կիլոգրամի համար 1000 ՀՀ դրամ, սակայն նշված իրավակարգավորումը հաշվի չի առել, որ մանրաձկների 1 կիլոգրամում քանակով կարող են լինել այնքան մեծ քանակությամբ ձկներ, որ դրանց ապօրինի որսի արդյունքում բնությանը իրականում պատճառվի ավելի մեծ վնաս (հաշվի առնելով մանրաձկների հետագա պրոգրեսը), քան 2կգ քաշով մեկ ձուկ բռնելիս, ուստի անհրաժեշտ է լրացնել իրավանորմ, որը հնարավորություն կտա բոլոր տեսակի ձկների մանրաձկների ապօրինի որսի հետևանքով պատճառված վնասի հաշվարկն իրականացնել ոչ թե կիլոգրամներով, այլ առանձնյակներով.</p> <p>2) 5-րդ հոդվածի 1-ին մասում իրավակարգավորող նորմի հստակեցման նպատակով անհրաժեշտ է կատարել փոփոխություններ.</p>	<p>1) 3-րդ հոդվածում անհրաժեշտ է լրացնել իրավանորմ, որը հնարավորություն կտա բոլոր տեսակի ձկների մանրաձկների ապօրինի որսի հետևանքով պատճառված վնասի հաշվարկն իրականացնել ոչ թե կիլոգրամներով, այլ առանձնյակներով, ընդ որում մինչև 50 գրամ քաշ ունեցող և 50-ից մինչև 200 գրամ քաշ ունեցող մանրաձկների համար անհրաժեշտ է սահմանել տարբեր սակագներ՝ նկատի ունենալով դրանց ապօրինի որսի արդյունքում պատճառվող վնասի առանձնահատկությունները.</p> <p>2) 5-րդ հոդվածի 1-ին մասում «Արմատից կտրված, ինչպես նաև հողմատապալ կամ ապօրինի հատված ցցաչոր ծառերի հափշտակման դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է» բառերը փոխարինել «Արմատից կտրված, ինչպես նաև հողմատապալ կամ ապօրինի հատված ցցաչոր ծառերին ապօրինի տիրանալու դեպքում վնասի հատուցման սակագինը կազմում է» բառերով.</p>

		<p>3) օրենքով սահմանված են վնասի հատուցման չափի հաշվարկման սակագներ պատճառված այն վնասի համար, որի դեպքում տեղի է ունեցել ծառի աճի դադարեցում, սակայն գործնականում առկա են իրավախախտումներ (օրենքով նույնպես սահմանված են), երբ ծառերը և թփերը հատվում են մասկանի:</p> <p>4) Անհրաժեշտ է սահմանել բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի և վնասի հատուցման չափի հաշվարկման բանաձևերը՝ ներկայումս օրենքում առկա տարրնթերցման հնարավորությունները բացառելու նպատակով</p>	<p>3) Անհրաժեշտ է պատճառված վնասի հատուցման սակագին սահմանել ծառերի և թփերի մասնակի վնասման այն դեպքերի համար, որոնց հետևանքով աճի դադարեցում տեղի չի ունեցել:</p> <p>4) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին հոդվածով «Հոդված 6.1. Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի և վնասի հատուցման չափի հաշվարկման բանաձևերը</p> <p>1. Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝</p> $V = P \times U \times Q$ <p>Որտեղ՝</p> <p>V - բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի չափն է</p> <p>P - բուսական կամ կենդանական աշխարհի վնասված (ոչնչացված) օբյեկտների քանակն է</p> <p>U - սույն օրենքի 2-րդ գլխով սահմանված բնապահպանական իրավախախտման հետևանքով բնությանը պատճառված վնասի համար սահմանված սակագինն է</p> <p>Q - սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված գործակիցն է (գործակից սահմանված չլինելու դեպքում կիրառվում է 1(մեկ) գործակիցը)</p>
--	--	---	--

		<p>5) օրենքով սահմանված վնասի հատուցման չափի հաշվարկան եղանակը գործնականում ոչ միշտ է կիրառելի՝ նկատի ունենալով որոշ դեպքերում իրավախախտման արձանագրման և դրա անբաժանելի մասը կազմող հաշվարկի կազմման անհնարինությունները, գործնականում ավելի կիրառելի հաշվարկի ձև է անհրաժեշտ սահմանել՝ հաշվի առնելով նաև, որ այսուհետ հաշվարկը կատարվելու է տեսչական մարմնի կողմից.</p>	<p>2. Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝</p> $ԲՎ_{ՀԶ} = Վ + Բ_{ՎԾ}$ <p>Որտեղ՝</p> <p>ԲՎ_{ՀԶ} - բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափն է</p> <p>Վ - բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի չափն է</p> <p>Բ_{ՎԾ} - Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի գումարն է:».</p> <p>5) 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝</p> <p>«Հոդված 7. Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկի կատարումը</p> <p>1. Սույն օրենքի համաձայն՝ բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկը կատարում է շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման և կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող</p>
--	--	---	--

		<p>6) ներկայումս սահմանված պահանջի ներկայացման ու</p>	<p>պաշտոնատար անձը (այսուհետ՝ Տեսուչ)՝ մասնագիտական եզրակացություն կազմելով:</p> <p>2. Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկի վերաբերյալ մասնագիտական եզրակացության (այսուհետ՝ մասնագիտական եզրակացություն) օրինակելի ձևը հաստատում է շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման ոլորտներն երում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) ղեկավարը: Մասնագիտական եզրակացությունը ստորագրում է կազմող Տեսուչը՝ կնիքով հաստատում է տեսչական մարմնի ղեկավարը կամ տեսչական մարմնի տարածքային բաժնի պետը:</p> <p>Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննվող գործերի անհրաժեշտությունից ելնելով՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով՝ հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող մարմինը հարցում է ուղղարկում տեսչական մարմնի ղեկավարին: Հարցումը ստանալուց հետո մասնագիտական եզրակացությունը օրենքով սահմանված կարգով տրամադրվում է (առձեռն, փոստային կամ էլեկտրոնային առաքմամբ) ոչ ուշ քան հարցումը ստանալու օրվան հաջորդող յոթերորդ աշխատանքային օրը:».</p> <p>6) 8-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝</p>
--	--	---	--

	<p>գանձման կարգը պրակտիկ չէ հաշվի առնելով որ կիրառելի չէ հանրային իրավական դրամական պահանջ ներկայացնելու ինստիտուտը, բացի այդ անհրաժեշտ է սահմանել տեսչական մարմնի կողմից ընդունվող անհատական իրավական ակտերի ծանուցման այնպիսի ձև, որը կհամապատասխանի ներկայիս օրենսդրության պահանջներին և որի մեջ ներառված կլինեն ծանուցման բոլոր հնարավորությունները՝ ներառյալ ինտերնետով հրապարակային ծանուցումը:</p>	<p>«Հոդված 8. Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ պահանջի ներկայացման, ծանուցման և գումարի գանձման կարգը</p> <p>1. Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ տեսչական մարմինը կայացնում է վնասի հատուցման պահանջ ներկայացնելու մասին որոշում (այսուհետ՝ Որոշում)՝ անհատական իրավական ակտ:</p> <p>2. Որոշումը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը: Որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե դրա դարձերեսին ստորագրել է անձամբ հասցեատերը, կամ դրա ստացման մասին անդորրագիրը ստորագրել է անձամբ հասցեատերը, կամ հասցեատերը հրաժարվել է որոշումն ստանալուց: Որոշումը համարվում է անձամբ հանձնված նաև այն դեպքում, երբ հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա այն ուղարկվել է էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու) միջոցով, և դրանք հավաստում են պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցված լինելու փաստը կամ հասցեատերը դիմել է տուգանքի վճարումը տարաժամկետելու խնդրանքով կամ բողոքարկել է որոշումը, որոնց դեպքում որոշումը հանձնելու օր է համարվում տարաժամկետելու խնդրանքով դիմելու կամ բողոքարկելու օրը: Որոշումը էլեկտրոնային փոստով ուղարկելու դեպքում ծանուցումն իրականացվում է «Ինտերնետով հրապարակային և անհատական</p>
--	---	--

			<p>ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:</p> <p>3. Եթե անձի (որին ուղարկվել է որոշումը) հայտնած հասցեով ուղարկված որոշումը վերադարձվել է, կամ ծանուցման փաստը չի հաստատվել, կամ հասցեատերը հրաժարվել է ստանալ պատշաճ կարգով ուղարկված (հանձնվող) որոշումը և ստորագրել հրաժարվելու մասին, ապա որոշումն ուղարկվում է այդ անձի հաշվառման հասցեով (եթե անձի հայտնած հասցեն տարբերվում է նրա հաշվառման հասցեից) և տեղադրվում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Այն դեպքերում, երբ որոշումն ուղարկվում է անձի հաշվառման հասցեով և տեղադրվում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, որոշումը համարվում է հանձնված (պատշաճ ծանուցված) որոշումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ օրը:</p> <p>4. Որոշման օրինակը ստանալու պահից երկամսյա ժամկետում իրավախախտում կատարած անձը պարտավոր է տեսչական մարմնի կողմից մատնանշված հաշվեհամարին վճարել պատճառված վնասի ողջ գումարը, եթե տեսչական մարմնի ղեկավարի կողմից գումարի վճարման տարաժամկետում չի կատարվել:</p> <p>5. Պատճառված վնասի գումարի հատուցման տարաժամկետումը կարող է կատարվել տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացվող որոշմամբ՝ իր նախաձեռնությամբ կամ Տեսուչի զեկուցագրի կամ իրավախախտում կատարած անձի միջնորդության հիման վրա՝ ոչ ավել քան 6 (վեց) ամիս ժամկետով:</p> <p>6. Եթե սույն հոդվածի 4-րդ մասում նշված կամ</p>
--	--	--	---

			<p>տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ տարաժամկետված ժամկետում իրավախախտում կատարած անձի կողմից բնությանը պատճառված վնասը չի հատուցվում, ապա վնասը ենթակա է գանձման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հանրային իրավական դրամական պահանջով:</p> <p>5) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննվող գործերի շրջանակներում՝ բնությանը պատճառված վնասի հատուցման հարցը լուծվում է գործը քննող դատարանին ներկայացվող քաղաքացիաիրավական պահանջով»:</p>
6.	«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ	Անհրաժեշտ է 18-րդ հոդվածը լրացնել բուսական աշխարհի օբյեկտների ապօրինի հատումից, օգտագործումից, ձեռքբերումից, տեղափոխումից կամ այլ եղանակով տիրապետումից պահպանություն սահմանող արգելքով, որը ներկայումս սահմանված չէ:	<p>18-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետով՝</p> <p>«գ) բուսական աշխարհի օբյեկտների ապօրինի (օրենքով սահմանված կարգի խախտմամբ) հատումը (ներառյալ՝ մասնակի), օգտագործումը, ձեռքբերումը, տեղափոխումը կամ այլ եղանակով տիրապետումը»:</p>
7.	«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ	Անհրաժեշտ է 19-րդ հոդվածը լրացնել կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի որսից, օգտագործումից, ձեռքբերումից, տեղափոխումից կամ այլ եղանակով տիրապետումից պահպանություն սահմանող արգելքով, որը ներկայումս սահմանված չէ:	<p>19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով՝</p> <p>«ե» կենդանական աշխարհի օբյեկտների (ներառյալ՝ ձկների) ապօրինի (օրենքով սահմանված կարգի խախտմամբ) որսը, օգտագործումը, ձեռքբերումը,</p>

			տեղափոխումը կամ այլ եղանակով տիրապետումը»:
8.	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ	<p>1) Առանց փորձաքննության եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ անձանց համար պարտականության սահմանման սույն օրենքի դրույթները կկրեն ֆորմալ բնույթ.</p> <p>2) Հաշվի առնելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշման պահանջները:</p>	<p>1) 27-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով՝ «7) պահպանել փորձաքննության եզրակացության պահանջները:»:</p> <p>2) 32-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝ «2. Փորձաքննության եզրակացության պահանջների պահանման և նախատեսվող գործունեությունը փորձաքննության ենթարկելու իրավահարաբերությունների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման ոլորտներներում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և/կամ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:</p>
9.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ	1)Նկատի ունենալով, որ քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից կայացված որոշումները հաճախակի տեսչական մարմին են հասցվում կայացման պահից 15-20 օր հետո, որի պարագայում իրավախախտում արձանագրելու, անձի լաված լինելու իրավունքը պահպանելու և վարչական պատասխանատվության ենթարկելու համար սահմանված ժամկետները հնարավոր չէ պահպանել, ուստի անհրաժեշտ է վարչական պատասխանատվության ենթարկելու ժամկետները,	1) 37-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «որոշում կայացվելու» բառերը փոխարինել «որոշումն իրավասու վարչական մարմնում ստացվելու» բառերով.

	<p>որոնք կապված են քրեական գործի հարուցումը մերժելու կամ գործը կարճելու հետ, սկսել հաշվարկել ոչ թե որոշման կայացման, այլ իրավասու վարչական մարմնի կողմից որոշումն ստանալու պահից.</p> <p>2) ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանվող հասկացությունները հաշվի առնելով իրավական հնարավորություն չկա հանքավայրերից դուրս իրականացված լեռնային զանգվածի ինքնագույն օգտագործման դեպքում իրավախախտի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու, որ պարագայում երկրաբանական գնահատման չարժանացած վայրերից լեռնային զանգվածից ինքնագույն օգտագործող անձիք չեն կարող ենթարկվել պատասխանատվության, ինչի հետևանքով տուժում են Հայաստանի Հանրապետության շահերը, որպես բնական ռեսուրսի սեփականատիրոջ: Միաժամանակ անհրաժեշտ է տարանջատել և ավելի խիստ պատիժ նախատեսել այն անձանց նկատմամբ, ոքեր ինքնագույն արդյունահանել են ընդերքում պարփակված օգտակար հանածոները՝ պետական հաշվեկշռում հաշվառված հանքավայրերից.</p>	<p>2) 49-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 49. Բնահողից, պետական սեփականություն հանդիսացող լեռնային զանգվածից և ընդերքից ինքնագույն օգտվելը</p> <p>1. Բնահողը (բացառությամբ՝ հողի բերրի շերտի) կամ պետական սեփականություն հանդիսացող լեռնային զանգվածը (անկախ երկրաբանական գնահատման ենթարկված լինելու հանգամանքից) ապօրինի (օրենքով սահմանված կարգի խախտմամբ) արդյունահանելը (ներառյալ՝ դրա փորձը), օգտագործելը, ձեռքբերելը, տեղափոխելը կամ այլ եղանակով տիրապետելը՝</p> <p>առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:</p> <p>2. Ընդերքում պարփակված օգտակար հանածոները ապօրինի (օրենքով սահմանված կարգի խախտմամբ) արդյունահանելը (ներառյալ՝ փորձը), օգտագործելը, ձեռքբերելը, տեղափոխելը կամ այլ եղանակով տիրապետելը՝</p> <p>առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով,</p>
--	---	--

		<p>3) բուսական աշխարհի օբյեկտների ապօրինի (օրենքով սահմանված կարգի խախտմամբ) հատումը (ներառյալ՝ մասնակի), օգտագործումը, ձեռքբերումը, տեղափոխումը կամ այլ եղանակով տիրապետումը, ինչպես նաև անտառահատման ֆոնդի օգտագործման, բնափայտի մթերման ու դուրսբերման և հեշի մթերման սահմանված կարգը խախտելու համար անհրաժեշտ է սահմանել սանկցիա, միաժամանակ որպեսզի ապահովվի սույն առաջարկությունների 6-րդ կետով առաջարկվող իրավանորմով սահմանվող արգելքի պահպանումը.</p> <p>4) կենդանական աշխարհի օբյեկտների (ներառյալ՝ ձկների) ապօրինի (օրենքով սահմանված կարգի խախտմամբ) որսը, օգտագործումը, ձեռքբերումը, տեղափոխումը կամ այլ եղանակով տիրապետումը, ինչպես նաև կենդանական աշխարհի օբյեկտների (ներառյալ՝ ձկների) պահպանության կանոնների խախտելու համար անհրաժեշտ է սահմանել սանկցիա, միաժամանակ որպեսզի ապահովվի սույն առաջարկությունների 7-րդ կետով առաջարկվող իրավանորմով սահմանվող արգելքի պահպանումը.</p> <p>5) անձանց լսված լինելու իրավունքն ապահովելու և արդյունավետ պաշտպանության միջոցներ ունենալու հնարավորություն տալու նպատակով անհրաժեշտ է սահմանել վարչական իրավախախտման վերաբերյալ</p>	<p>իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրվաթսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:».</p> <p>3) 65-րդ հոդվածի 1-ին պարբերությունը (դիսպոզիցիան) շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «բուսական աշխարհի օբյեկտների ապօրինի (օրենքով սահմանված կարգի խախտմամբ) հատումը (ներառյալ՝ մասնակի), օգտագործումը, ձեռքբերումը, տեղափոխումը կամ այլ եղանակով տիրապետումը, ինչպես նաև անտառահատման ֆոնդի օգտագործման, բնափայտի մթերման ու դուրսբերման և հեշի մթերման սահմանված կարգը խախտելը».</p> <p>4) 88-րդ հոդվածի 1-ին պարբերությունը (դիսպոզիցիան) շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «կենդանական աշխարհի օբյեկտների (ներառյալ՝ ձկների) ապօրինի (օրենքով սահմանված կարգի խախտմամբ) որսը, օգտագործումը, ձեռքբերումը, տեղափոխումը կամ այլ եղանակով տիրապետումը, ինչպես նաև կենդանական աշխարհի օբյեկտների (ներառյալ՝ ձկների) պահպանության կանոնների խախտումը».</p> <p>5) 256-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ պարբերությամբ՝ «Արձանագրությունը և (կամ) գործի քննության տեղի և ժամանակի վերաբերյալ ծանուցումը հասցեատիրոջն են հանձնվում սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով որոշման</p>
--	--	--	---

		<p>արձանագրությունը և գործի քննության տեղի և ժամանակի վերաբերյալ ծանուցումը պատշաճ ձևով հասցեատիրոջը հանձնելու կարգ, ինչով կապահովվի նաև տեսչական մարմնի ծանուցման պարտականության կանոնակարգումը:</p>	<p>հանձնման համար նախատեսված կարգով:»:</p>
10	<p>«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ</p>	<p>Ներկայումս սահմանված չէ այն մարմինը, որը ապահովելու է մթնոլորտային օդին պատճառված վնասի հատուցումը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշման պահանջները առաջարկվում է այդ գործառույթը վերապահել տեսչական մարմնին:</p>	<p>42-րդ հոդված՝ «կարգով» բառից հետո լրացնել «շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման և վերարտադրության ոլորտներն երում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից՝ ներկայացվող պահանջով:»</p>